

ԶԱՐԻՆԵ ԳԱՐԵԳԻՆԻ ՍԱՌԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող
zsarajyan@mail.ru

ORCID ID: 0009-0005-4103-2492

DOI: 10.54503/978-5-8080-1557-9-351

ԱՄԱՐԱՍԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՅ ՄԻՆՉԵՎ 19-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ Ամարաս, պատմագրություն, քրիստոնեություն, մշակութային հիշողություն, պատմական փաստ, ազգային ինքնություն, գրականություն:

Ներածություն

Մշակութային և պատմական հիշողությունը փոխանցվում է սերնդեսերունդ և առանցքային նշանակություն ունի ինքնության ձևավորման ու ամրապնդման գործում: Վերլուծելով մշակութային հիշողությունը, դրա նշանակությունն ու այդ համատեքստում տեքստի դերը՝ Յուրի Լոտմանը¹ նշում է, որ սեմիոտիկայի տեսանկյունից մշակույթը ներկայացնում է հավաքական ինտելեկտ և կոլեկտիվ հիշողություն, այսինքն՝ որոշակի հաղորդագրություններ (տեքստեր) պահելու և փոխանցելու, նորերը մշակելու մեխանիզմ: Այս իմաստով մշակույթի տարածքը կարող է սահմանվել որպես ինչ-որ ընդհանուր հիշողության տարածություն, այսինքն՝ տարածք, որի ներսում որոշ ընդհանուր տեքստեր կարող են պահպանվել և թարմացվել: Միևնույն ժամանակ, դրանց ակտուալացումը տեղի է ունենում որոշակի իմաստային տարբերակների սահմաններում, ինչը թույլ է տալիս ասել, որ տեքստը նոր

¹ **Յուրի Լոտմանը** (1922–1993) ռուս ականավոր մշակութաբան է, նշանագետ և գրականագետ: Նա համարվում է մշակութային նշանագիտության դպրոցի հիմնադիրներից մեկը և էական ազդեցություն է ունեցել հումանիտար գիտությունների զարգացման վրա:

դարաշրջանի համատեքստում, մեկնաբանությունների ողջ փոփոխականությամբ, պահպանում է իր ինքնությունը²: Այս համատեքստում առանձնահատուկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում **Ամարասի** վերաբերող տեքստերի դինամիկան պատմական տարբեր ժամանակաշրջանների դիտարկումներում՝ սկսած 4-րդ դարից մինչև 19-րդ դար, ինչը քննության ենք առել մեր ուսումնասիրության տիրույթում: Հոդվածի **նպատակն է** ուսումնասիրել Ամարասի վանքի դերը հայ մշակութային հիշողության մեջ՝ պատմագրությունից մինչև 19-րդ դարի հայ գրականություն՝ պարզաբանելով, թե ինչպես է Ամարասի վանքը վերափոխվել պատմական և մշակութային խորհրդանիշի, և ինչպես է այն արտացոլվել հայ պատմագիրների և գրողների աշխատություններում:

Առաջադրված **խնդիրներից են՝** ուսուսումնասիրել Ամարասի վանքի վերաբերյալ պատմագրական, ուղեգրությունների, ազգագրական և այլ հիշատակությունները, հայ գրականության մեջ Ամարասի վանքի և նրա պատմության անդրադարձները 4–19-րդ դարերում: Բացահայտել, թե ինչպես է վանքն ընկալվել որպես սրբավայր և ազգային արժեք՝ պատմության տարբեր ժամանակաշրջաններում:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են պատմահամեմատական, տեքստաբանական, հերմենևտիկ և այլ **մեթոդներ**:

Հոդվածի նորույթն այն է, որ Ամարասի վանքի դերը դիտարկվում է ոչ միայն որպես կրոնական և պատմական կենտրոն, այլ նաև որպես մշակութային հիշողություն կրող՝ 4–19-րդ դարերի հայ պատմագրության, ազգագրության, ուղեգրության, գրականության տեսանկյուններից: Սա նոր մոտեցում է, քանի որ ուսումնասիրությունը հատում է պատմագրության և գրականության սահմանները՝ ներկայացնելով, թե ինչպես է Ամարասի վանքը պահպանվել ոչ միայն պատմագրական աղբյուրներում, այլ նաև ուղեգրական, ազգագրական, գեղարվեստական գրականության էջերում: Հոդվածը նոր լույս է սփռում, թե ինչպես են պատմական իրադարձությունները և վանքի մշակութային նշանակությունը ներթափանցել հայ ազգային ինքնության ձևավորման և մշակութային հիշողության պահպանման գործընթացներում:

² **Лотман Ю.**, Память в культурологическом освещении, Лотман Ю.М. Избранные статьи. Т. 1, Таллин, 1992, с. 200–202.

Ամարաս անվան հարցը

Ամարասի վանքն ունի մշակութային և պատմական հարուստ հիշողություն: Այն առանցքային դեր է ունեցել քրիստոնեության պատմության մեջ, ինչն էլ հսկայական ազդեցություն է թողել հայ ժողովրդի մշակութային հիշողության և ինքնության վրա: Նախ՝ դիտարկենք Ամարաս անվան հարցը. Փավստոս Բուզանդը³ Ամարասն անվանում է գյուղ, Մովսես Խորենացին⁴ ավան, Մովսես Կաղանկատվացու մոտ ընթերցում ենք գյուղաքաղաք⁵:

Ղ. Ալիշանը հարցի շուրջ գրում է. «Նրանք (պատմիչները) վկայում են, որ այն պետք է գտնված լինի Փոքր Սյունիքում կամ Արցախի Հաբանդ գավառում: Առանց երկբայելու պետք է ասել, որ դա գավառի գլխավոր շեներից մեկն էր, կարծեմ Դիցավանը, քանի որ անունը գրվում է նաև Ասարազ, որ հիշեցնում է Արամազդին և հաստատում այն կարծիքը, որ այդտեղ է գնացել մեր Սուրբ Լուսավորիչը՝ կռապաշտության խավարը հալածելու համար»⁶:

Պատմաբան Շահեն Մկրտչյանն անունը կապում է հեթանոսության հետ՝ գրելով, որ պատմիչների արձանագրած կցկտուր տեղեկությունները, սերնդեսերունդ փոխանցվող բանավոր պատումները և այլ աղբյուրները թույլ են տալիս ասել, որ Ամարասը եղել է նաև հեթանոսական ոչ պակաս նշանավոր ուխտատեղի, սրբավայր: «Ի դեպ, Ամարաս, Ամարազ անունը հեթանոսական ծագում ունի և բառացի նշանակում է Աստվածություն»⁷, – նկատում է Շ. Մկրտչյանը:

Հուշարձանագետ Սլավա Սարգսյանն իր «Արցախ: Պատմաաշխարհագրական ճշգրտումներ» աշխատության մեջ նշում է, որ **Ամարասի** վանական խոշոր համալիրը գտնվում է Արցախի պատմական Մյուս Հաբանդ գավառի գրեթե կենտրոնական մասում, այժմյան Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ, Խազազ և Լուսա-

³ **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 75:

⁴ **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 241:

⁵ **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., Հայկական ՄՍՀ հրատ., 1983, էջ 39:

⁶ **Ղևոնդ Ալիշան**, Արցախ, Եր., ԵՊՀ հրատ., 1993, էջ 98:

⁷ **Էջմիածին**, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, «Ամարաս վանական համալիր», հեղ.՝ Շահեն Մկրտչյան, Արմեն Մկրտչյան, 2000, հունիս, էջ 64–65:

վորիչ ցածրադիր սարերի ստորոտում, միանգամայն հարթ տարածքում, Ամարաս գետակի ձախ ափին⁸:

Ամարասը և Փավստոս Բուզանդը

Փավստոս Բուզանդի «Պատմություն հայոց» երկասիրության մեջ նկատում ենք Ամարասին վերաբերող առաջին հիշատակությունը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Ամարասի անունը գրեթե բոլոր տեքստերում շաղկապված է քրիստոնեության տարածման հետ: Բուզանդի երկում ևս առանձնանշելի է այս հանգամանքը:

Պատմության Երրորդ դարության «Գրիգորիսի վախճանի մասին» 2 գլխում Բուզանդը լավագույն և ամենաառաքինի գծերով է ներկայացնում Գրիգորիս եպիսկոպոսին: Նա մանուկ հասակում է ստանձնում իր հոգևոր ծառայությունը, կառուցում և վերանորոգում է եկեղեցիներ, մինչև Ատրպատականի կողմերի գավառները: Պատմագիրը վկայում է. «Նա քարոզիչ էր քրիստոնեական ճշմարիտ հավատին և ամենքին երևում էր սքանչելի ու զարմանալի իր խստակյաց, անտանելի ճգնողական վարքով, պահեցողությամբ, մաքուր կյանքով, անքուն հսկումներով և անձանձրույթ ջերմ աղոթքներով առ տեր աստված՝ բոլոր մարդկանց համար...»⁹:

Քրիստոնեություն քարոզելով՝ Գրիգորիս եպիսկոպոսը հասնում է Մասքութների Արշակունի Սանեսան անունով թագավորի բանակի ճամբարը: Ներկայանալով Մասքութների թագավորին, Հոնաց բազմաթիվ զորքերի իշխանին՝ նրանց սկսում է քարոզել ու ավետարանել քրիստոնեությունը, քրիստոնեական արժեքները՝ հորդորելով չսպանել, չհափշտակել, չթալանել, չավարառել, ուրիշի ունեցվածքին աչք չդնել և այլն:

Բուզանդի վկայությամբ՝ սկզբից հնազանդվում են, ապա քննելով Քրիստոսի օրենքները՝ նրանք այդ ամենն ընկալում են որպես «Հայոց թագավորի մտադրություն», որը եպիսկոպոսին ուղարկել է «կրոնով ավարառության արշավանքներն իր աշխարհից խափանելու», «քաջությունից իրենց զրկելու, ապրուստի աղբյուրը խափանելու» նպատա-

⁸ **Սարգսյան Ս.**, Արցախ. պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Եր., «Հայ Էդիթ» հրատ., 1996, էջ 30:

⁹ **Փավստոս Բուզանդ**, Պատմություն հայոց, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 73–74:

կով: Եվ նրանք որոշում են Սուրբ Գրիգորիսին սպանել և արշավել Հայաստանի վրա: «Գրիգորիսի վախճանի մասին» գլուխը Բուզանդն ավարտում է Սուրբ Գրիգորիսի սպանության և նրա մասունքները Ամարասում ամփոփելու մասին վկայությամբ. «Ապա բռնեցին մի կատաղի ձի, մանուկ Գրիգորիսին կապեցին ու կախեցին ձիու պոչից և ձին բաց թողեցին հյուսիսային մեծ ծովի առափնյա Վատնյա դաշտում, իրենց բանակից դուրս: Եվ այսպես սպանեցին Քրիստոսի քաջ քարոզչին՝ մանուկ Գրիգորիսին: Ապա այն մարդիկ, որոնք Հաբանդ գավառից գնացել էին նրա հետ, վերցրին նրա մարմինը և բերին իրենց գավառը Հաբանդ, Աղվանից կողմերում, Հայաստանի սահմանում, **Ամարազ** կոչված գյուղը: Նրան թաղեցին այն եկեղեցու մոտ, որ շինել էր Գրիգորիսի պապը՝ առաջին Գրիգորը, Հայաստան աշխարհի մեծ քահանայապետը: Եվ ամեն տարի այդ կողմերի ու գավառների ժողովուրդն այդտեղ հավաքվելով նրա քաջության հիշատակի տոնը կատարում է ցնծությամբ»¹⁰:

Վերոնշյալ վկայությունը հետագա դարերում գրեթե բոլոր պատմագիրներն ու գրչի մշակները Ամարասին վերաբերող տեքստերում հիշատակել են՝ իրենց պատումը համալրելով պատմագրական, դավանաբանական, ազգագրական, բանահյուսական և այլ մեկնություններով:

Ամարասը և Մովսես Խորենացին

Քերթողահայր Մովսես Խորենացին, իր պատմագրելու սկզբունքներին հավատարիմ, պատմական փաստերին մոտեցել է ամենայն խստությամբ՝ ձգտելով գրել հավաստի պատմություն: Խորենացու «Պատմություն հայոց» աշխատության «Սուրբ Գրիգորիսի մահը բարբարոսների ձեռքով»¹¹ գլխում քրիստոնեության տարածման համատեքստում է ծավալվում պատումը: Քերթողահայրը պատմում է, թե ինչպիսի մեծ վճռականությամբ է երանելի Տրդատը պայքարում հանուն քրիստոնեական հավատի և վարքի քարոզման, մանավանդ իր իշխանության հեռավոր վայրերում, որտեղ մեծ դժվարություն կար քրիստոնեական հավատը տարածելու: Թագավորի մոտ են գալիս երկրի հյուսիս-արևելյան կողմերի գործակալները, Փայտակարան կոչված հեռա-

¹⁰ Նույն տեղում, 1968, էջ 75:

¹¹ **Մովսես Խորենացի**, Պատմություն հայոց, Եր., «Հայաստան» հրատ., 1968, էջ 240:

վոր քաղաքի վերակացուները և ասում. «Եթե կամենում ես այն կողմի մարդկանց ըստ այս հավատի ուղիղ կառավարել, ապա նրանց եպիսկոպոս ուղարկիր սուրբ Գրիգորի սերնդից, որովհետեւ մեծ փափագով խնդրում են, եւ մենք հաստատ գիտենք, որ Գրիգորի հռչակված անվան պատճառով կակնածեն նրա սերնդից եւ նրա հրամանի համաձայն կվարվեն»¹²: Պատումի շարունակությունում Խորենացին, հաստատելով Բուզանդի վկայությունը, նշում է, որ «Երանելի Տրդատը նրանց եպիսկոպոս է տալիս մանուկ Գրիգորիսին՝ Վրթանեսի ավագ որդուն»: Ապա, անդրադառնալով նրա «մանուկ հասակին», պարզաբանում է, որ թեպետ «նրա անչափահասության պատճառով այս բանը կանոնի դեմ էր համարվում, բայց նկատելով նրա հոգու մեծությունը և հիշելով, որ Սողոմոնը տասներկու տարեկան հասակում թագավորեց Իսրայելի վրա, մեծ վստահությամբ ուղարկեց մի ոմն Սանատրուկի հետ, որ իր Արշակունի ցեղից էր»¹³:

Ապա Խորենացին պատմում է Սուրբ Գրիգորիսի առաքինությունների մասին, որին հաջորդում է նրա սպանության մասին վկայությունը, որտեղ որոշ տեղեկություններով լրացնում է Բուզանդի տեքստը՝ կոնկրետացնելով Գրիգորիսին սպանելու աշխարհագրական վայրի մասին տեղեկությունը՝ հավատարիմ մնալով նրա մասունքների ամփոփման տեղի վերաբերյալ Բուզանդի վկայությանը, այն է՝ **Ամարաս**: Ահավասիկ. «Իսկ երբ Տրդատի վախճանվելու լուրը հասավ, բարբարոսները նույն Սանատրուկի և ուրիշ մի քանի միշտ սուտ խոսող աղվանների դավերով, երանելի (Գրիգորիսին) սպանեցին Վատնյան դաշտում, Կասբիական կոչված ծովի մոտ, ձիերով ոտնատակ անելով: Նրա սարկավագները նրա մարմինը բերին Փոքր Սյունիք, թաղեցին Ամարաս ավանում: Իսկ Սանատրուկը թագ դնելով իր գլուխը՝ գրավեց Փայտակարան քաղաքը, և մտածում էր ամբողջ Հայաստանին տիրել օտար ազգերի օգնությամբ»¹⁴:

Ամարասը և Մովսես Կաղանկատվացին

Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկը հայ պատմագրության արժեքավոր երկերից է, որը կարևորագույն

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 241:

տեղեկություններ է փոխանցում Հայաստանի, մասնավորապես նրա արևելյան նահանգների ու հարևան երկրների փոխհարաբերությունների, անցուդարձերի, քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակի և մշակույթի մասին: Կաղանկատվացին, լրացնելով իր նախորդ պատմագիրներին, իմաստային լրացուցիչ նոր շերտեր է փոխանցում մեզ՝ Ամարասին վերաբերող տեքստում բերելով տեսիլքի, երազի գործառույթը՝ որպես միստիկ, իռացիոնալ, դավանաբանական մոտեցում: Վերոնշյալ հանգամանքը հատկապես նկատելի է Կաղանկատվացու պատմության «Աղվանքի կաթողիկոս երանելի Գրիգորիսի մասունքների հայտնաբերումը, որ նահատակվեց Մասքութների երկրում մասքութների Սանեսան թագավորի ձեռքով»¹⁵ և «Երանելի Վաչագանի տեսիլքը»¹⁶ գլուխներում, որտեղ պատմագիրը հանգամանորեն ներկայացնում է իրադարձությունների պատմությունը՝ մանրակրկիտ նկարագրություններով՝ 15-ամյա Գրիգորիսին եպիսկոպոս ձեռնադրելուց, քրիստոնեական դավանանքը քարոզելուց, բարբարոսների կողմից նահատակվելուց մինչև մասունքներն ամփոփելու մանրամասներ, տեղն անհայտ պահելու պատճառներ, ապաև Վաչագան Բարեպաշտի տեսիլքն ու ըստ այդ տեսիլքի՝ մասունքների տեղը որոնելու, գտնելու, դրա տեղը եկեղեցի հիմնելու պատում:

Ամարասին վերաբերող Կաղանկատվացու տեքստում առանցքային տեղ ունեն երազը, տեսիլքը, Աստվածայինի ներկայությունը, հրաշքը, որոնք երբեմն հատկանշվում են որպես ասելիքի հիմնական բանալի: Այս տեսանկյունից Կաղանկատվացու տեքստը հատում է պատմագիտության փաստավավերագրական սահմանները՝ ձեռք բերելով դավանաբանական գրականությանը բնորոշ խոր իմաստային շերտեր, որը, ինչ խոսք, հատկանշվում է հոգևոր, ազգային ինքնագիտակցությունը սերունդների մշակութային հիշողության մեջ արթուն պահելու արժեքաբանական գործառույթով:

Ուշագրավ է «Երանելի Վաչագանի տեսիլքը»¹⁷ գլուխը. պատմիչը գրում է, որ բարեպաշտ թագավորը առանց դադարելու աստծուց խնդրում է սուրբ Գրիգորի մասունքների հայտնաբերումը. «Մինչդեռ

¹⁵ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., «Հայաստան» հրատ., 1969, էջ 48:

¹⁶ Նույն տեղում, էջ 53:

¹⁷ Նույն տեղում, էջ 53:

նստած գիշերային պաշտամունքն էր կատարում, մի վայրկենական նինջ է պատում թագավորին. մի ծայն հնչելով ասում է. «Այն, ինչ դու աղաչանքներով խնդրում ես, այնտեղ հայտնվեց»: Եվ երազում իմացավ, ինչպես ինքը պատմեց, ու ասաց, թե ինքն Ամարաս է գնում, եւ որ այնտեղ, ասում է, ինչ-որ մի մարդու, հայտնված պետք է լինի: Անմիջապես, շուտափույթ կերպով իրենից առաջ իր պալատական քահանա Մանասեին Ամարաս է ուղարկում և ասում է. «Իմ երազը ոչ ոքի մի՛ պատմիր»: Եվ հետո թագավորը հարցնում է, թե արդյոք որեւէ մեկին չի՞ հայտնել: Իսկ Հովել քահանան, որ մի անապատական էր և արքայի մոտ էր լինում, պատմում է նրան՝ «Ես միևնույն տեղում, որտեղ Հովել սարկավագին հրամայվեց փորել, տեսել եմ, թե ինչպես ակունքից դուրս է գալիս մի խիստ սակավաջուր աղբյուր, բայց առաջ ընթանալով չափազանց հորդանում է: Եվ ես զարմացա, թե առաջ այստեղ աղբյուր չկար, այժմ այս հորդ ջուրը որտեղի՞ց է բխում»: Երբ Քարվեճից մեկնում են, կանայք Ամարաս գյուղաքաղաքից ընդառաջ են դուրս գալիս նրանց»¹⁸: Երկար տառապանքներից, տքնաջան աշխատանքներից, աղոթքներից ու Աստծուն ուղղված աղերսներից հետո հաջողվում է գտնել Գրիգորիսի մասունքները: Թագավորը, լցված երախտագիտությամբ առ Աստված, մասունքները կնքում է արքայական մատանիով: Ապա, ըստ Կաղանկատվացու, թագավորը հրամայում է եպիսկոպոսներից յուրաքանչյուրին տալ մի մաս՝ բաշխելու իրենց թեմերի մեջ, մասունքների մեծ մասը թողնել Ամարասում, իսկ մնացածը մեծ զգուշությամբ ու սրբությամբ ինքն է պահում: Թագավորը հրամայում է գերեզմանի վրա մատուռ հիմնել ու անվանել Սուրբ Գրիգորիսի մատուռ:

Ուշագրավ է նաև Կաղանկատվացու պատումը («Պատմական տեղեկություն Սուրբ Մեսրոպի և նրա ընկերների մասին») այն մասին, որ հայոց գրերի հեղինակ Մեսրոպ Մաշտոցը, V դ. սկզբին Ամարասում քրիստոնեական հավատք տարածելով, տեղի ժողովրդին նաև գիր և գրականություն է ուսուցանում՝ կրթական-լուսավորչական գործունեություն ծավալելով այնտեղ և հիմք դնելով առաջին հայկական դպրոցին¹⁹:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Նույն տեղում, էջ 70:

Ամարասը և Ստեփանոս Օրբելյանը

Հայ մատենագրության ինքնատիպ և արժեքավոր երկերից է Ստեփանոս Օրբելյանի (մոտավորապես 1250–1303 թթ.) «Պատմութիւն նահանգին Սիսական»²⁰ երկը, որտեղ պատմիչը ներկայացրել է ոչ միայն Սյունյաց աշխարհի քաղաքական և եկեղեցական անցուդարձը, այլև անդրադարձել է հարևան երկրներին՝ Աղվանքին ու Վիրքին, ինչպես նաև ժողովուրդներին: Երկում պատմիչը Սյունիքի պատմությունը ներկայացնում է՝ Հայաստանի պատմությանը ներհյուսած, որտեղ անմասն չի մնում նաև Արցախը՝ Փոքր Սյունիքը: Պատմության մեջ հեղինակը, անդրադառնալով Մեծ Հայքի Արցախ նահանգին, ներկայացնում է մի շարք բնակավայրեր, աշխարհագրական անվանումներ, որտեղ ուշագրավ են Ամարասին վերաբերող հիշատակումները:

Պատմության Ե գլխում Օրբելյանը, պատմելով Սյունյաց աշխարհում քրիստոնեական լուսավորության տարածման, Տրդատի, Գրիգոր Լուսավորչի, մեհյանների ավերման ու եկեղեցիների կառուցման մասին, վկայում է, որ Ամարաս եկեղեցին հիմնվել է Գրիգոր Լուսավորչի կողմից, որը հետագայում դարձել է քրիստոնեական կարևոր կենտրոն ու տաճար. «Երթեալ ի Վիրս, և անտի յԱղվանս մինչ ի Մասգութս և ի պահակն Հոնաց. և հաստատեալ զամենայնսն ի հաւատս՝ գայ ի փոքր Սիւնիք. և մտեալ **յԱմարաս**՝ շինէ եկեղեցի և թողու անդ սպասաւորս»²¹:

Հայ մատենագիրները, ներկայացնելով Ամարասի շինարարության, շենացման, հոգևոր կենտրոնի վերածվելու մասին պատումները, հիշատակում են նաև բարբարոսների կողմից տարբեր ժամանակաշրջաններում ավերի ու ավարառության ենթարկվելու մասին վկայություններ: Եթե Կաղանկատվացին փաստում է արաբների կողմից 9-րդ դարում Ամարասի վանքն (ողջ գավառը) ասպատակելու և ավարառության ենթարկելու վկայությունը. «Պարտավից գաղտնի դուրս եկան արաբ ընտիր մարդիկ, ավարի ենթարկեցին Ամարաս գավառը, և մոտ հազար հոգի գերեվարելով, ամրացան Մեծիրանքի սահմանում»²², ապա

²⁰ Արարեալ Ստեփաննոս Օրբելեան Արքեպիսկոպոսի Սիւնեաց, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, 618 էջ:

²¹ Նույն տեղում, էջ 20:

²² Կաղանկատվացի Մովսես, Պատմություն Աղվանից աշխարհի, Եր., «Հայաստան» հրատ., 1969, էջ 255:

Ստեփանոս Օրբելյանը մեզ է փոխանցում Ամարասը 13-րդ դարում մոնղոլների կողմից ավարառության ենթարկվելու մասին փաստը, երբ Բայտու խանը ուղարկեց Տարսայիճի որդի Ջալալին այլ մոնղոլ տղամարդկանց հետ Աղվանից մեծ աթոռ Ամարաս, որը հին ժամանակներից Աղվանքի կաթողիկոսանիստն է եղել, և իր մոտ բերել տվեց Սուրբ Գրիգորիսի գավազանը, աստվածահրաշխաչը՝ պատրաստված ոսկուց և զարդարված 36 թանկարժեք քարերով: Պատմելով Բայտուի խան և թագավոր կարգվելու մասին՝ Օրբելյանը փաստում է. «Սա յուղարկեալ զՋալալան՝ որդի Տարսայիճին, այլ ևս մուղալ արամբք ի մեծ աթոռն Աղվանից **յԱմարաս**, որ ի հինսն լեալ էր աթոռ կաթողիկոսաց նոցին. ետ տանել առ ինքն զգաւազան սրբոյն Գրիգորիսի՝ որդւոյն Վարդանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի. քանզի և կայր գերեզման նորին անդ: Վասն որոյ և գաւազանն ի նմին եկեղեցւոջ պահեցաւ: Ընդ նմին տարան և զսքանչելի խաչն աստուածահրաշխ, որ ի հին ժամանակաց կայր անդ, կազմեալ ի համակ ոսկւոյ և զարդարեալ 36 ակամբք պատուականօք. և այս ի մատնելոյ լիրբ և անզգամ երիցու մի ի նոյն վիճակէ»²³:

Ստեփանոս Օրբելյանն իր պատմությամբ Ամարասի վանքի հետ կապված ուշագրավ և արժեքավոր տեղեկություններ է փոխանցել, որոնք, ունենալով փաստավալերագրական նշանակություն, հեղինակի ինքնատիպ ոճի և աշխարհայացքային ըմբռնումների ու գեղագիտական առանձնահատկությունների շնորհիվ հատկանշվում են նաև իրենց գեղարվեստականությամբ:

Ամարասը 19-րդ դարի ուղեգրություններում. Սարգիս Ջալալյանց. «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան»

Սարգիս Ջալալյանցի (1819–1879 թթ.) «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան»²⁴ երկը աղբյուրագիտական, գրականագիտական, ազգագրական, հայագիտական կարևոր արժեք և պատմական վավերագրություն է, որը պատկանում է ուղեգրության ժանրին: Ճանապարհորդելով Հայաստանում՝ նա ուսումնասիրել և գրի է առել այնպիսի տեղեկություններ, որոնք ունեն ինչպես արժանահավատ փաստագրական

²³ Նույն տեղում, էջ 470:

²⁴ **Սարգիս Արքեպիսկոպոս Ջալալյանց**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Եր., «ԴԱԼԼ» հրատ. 2016, 696 էջ:

նշանակություն, այնպես էլ ճանաչողական, մշակութաբանական արժեք: Հոդվածի քննության առարկա Ամարասի վանքը ևս նրա ուշադրության առանցքում է եղել: Իր ժամանակային տարածքում քննության առնելով հարցը՝ չի շրջանցել նաև նախորդների արձանագրումները:

Երկի **«Ամարաս կամ Մարաս»**²⁵ գլխում Սարգիս Զալալյանցը հղում է անում նախորդ պատմագիրներից Բուզանդին, Խորենացուն, ինչպես նաև Հովհաննես կաթողիկոսին (Հայսմավուրքին)՝ իր հերթին վերաշարադրելով նրանց հիշատակումները Գրիգորիսի մասունքների՝ Ամարասում ամփոփված լինելու մասին: Ստեփանոս Օրբելյանին հղում անելով՝ Ս. Զալալյանցը պատմում է Ամարասի եկեղեցու ավարառության պատմությունը. «Թաթարների Սաբատուն խանը **կողոպտեց [Ամարասը]** և այլ սրբազան անոթների հետ այստեղից տարավ նաև Սուրբ Գրիգորիսի գավազանը և մի խաչ՝ ամբողջությամբ ոսկուց և ընդելուզված թանկագին քարերով, որը խնդրանքներով ստացավ հունաց արքայի դուստրը՝ Դեսպենան, որ Ապաղու խանի կինն էր, և ուղարկեց Կոստանդնուպոլիս, ինչպես գրում է Ստեփանոս Օրբելյանը»²⁶:

Զալալյանցը Ամարասն անվանում է գյուղաքաղաք և արձանագրում նրա՝ իր ժամանակաշրջանում արդեն ավերակ լինելը:

«Վերը նկարագրված վայրից ոչ հեռու **Մարաս** կոչվող ավերակ գյուղաքաղաքն է, որտեղ հնում Աղվանից աշխարհի կաթողիկոսական աթոռն էր, որը հետագայում տեղափոխվեց Պարտա, իսկ այնտեղից էլ՝ Գանձասար»²⁷,– այսպես է սկսում Ամարասի նկարագրությունը: Ի տարբերություն նախորդ պատմագիրների՝ Ս. Զալալյանցը նկարագրում է նաև վանքի ճարտարապետական կառուցվածքը, փաստում հնությունը. «Եկեղեցու կառուցվածքը բացահայտորեն ցույց է տալիս նրա հնությունը, ըստ որում [այն] սագաշեն չէ, այլ ոչ սրածայր գմբեթ ունեցող եկեղեցիների նման է. տեղը խորության մեջ է, ուր պետք է աստիճաններով իջնել: Վերջին ժամանակներում այս եկեղեցին սենյակավոր պարիսպով շրջափակեց Մելիք Շահնազարը»²⁸:

²⁵ Նույն տեղում, էջ 174:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

Հետագա գլուխներում ևս Ջալալյանցն անդրադառնում է Ամարասին: Այս առումով ուշագրավ են «Հերիեր»²⁹, «Կալեր»³⁰ վերնագրերով գլուխները:

Հերիեր անունը Ջալալյանցը բացատրում է որպես կրճատում Հավահար բառի: Այս գյուղն իր Հովահար անունը ստացել է մշտապես այստեղ փչող հով ու զով զեփյուռներից, ուստի և ընտրվել է [որպես] Ամարասի վանքի ամառանոց կամ հովարան, քանի որ ամռանը Գրիգորիսի աթոռի միաբանները, չարատանջ տապից նեղված, գալիս էին այստեղ և ապահովությամբ անց էին կացնում [ամռան] երեք ամիսները, իսկ սեպտեմբերին վերադառնում էին Ամարաս»³¹:

Այս գլխի հետագա շարադրանքում Սարգիս Ջալալյանցն իր տեսածը նկարագրում է ցավի ու ափսոսանքի զգացումով. «Երբ հռչակավոր Ամարասն ու նրա պատվական ամառանոցը տեսա ամբողջովին ավերված և անասունների բնակարան դարձած՝ ավելացան սգացող հոգուս հառաչանքները: Ո՞ր եմ, – ասացի, – հիմա այս մեծ աթոռի սրբագումար միաբանները, ո՞ր եմ նրա փառքի տաճարի պաշտոնյաները: Ո՞ր եմ մեծն Գրիգորիսի հարգելի նշխարների հոգեկիր սպասավորները, և ո՞ր եմ այս չքնաղ մենաստանի ժառանգավորների հոգեկիր ծայները: Անցան գնացին և իրենց հետ տարան հոգևոր վայելչությունները, հայրենիքի նախանձելի փառքը թաղելով մոռացության փոշու տակ»³²:

«Կալեր» գլխում ևս Ջալալյանցն անդրադառնում է Ամարասին, ընդ որում՝ պարզ է դառնում, որ նա մի քանի անգամ է այցելել Ամարաս, քանի որ գրում է. «Իմ առաջին այցելության ժամանակ Ամարասի վանքը շեն էր, ընդ որում նրա սենյակներում տեղակայված էր արքունի մաքսատունը, [այստեղ] կար նաև մի վարդապետ, որ սպասավորում էր Սուրբ Գրիգորիսի դամբարանին: Իսկ այժմ այստեղից հեռացել են թե՛ մաքսատունը, թե՛ վարդապետը, և Ամարասի վանքը մնացել է ավերակ դրության մեջ»³³:

²⁹ Նույն տեղում, էջ 499–500:

³⁰ Նույն տեղում, էջ 517:

³¹ Նույն տեղում, էջ 499:

³² Նույն տեղում:

³³ Նույն տեղում, էջ 517:

Նշենք, որ Կալերը ևս Ամարասին շատ մոտ գտնվող վայր է, որը մերձակա բնակավայրերի բնակիչների համար վարուցանքի տեղ էր:

Մակար Բարխուտարեանց. «Արցախ»

Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանցն (1832–1906 թթ.) իր «Արցախ»³⁴ աշխատությունում առանձին գլուխ է նվիրել Ամարասին³⁵:

Ամարասի պատումը նա սկսում է աշխարհագրական վայրի մանրակրկիտ նկարագրությամբ, շրջակա սարերի, դաշտավայրի, վտակի կոնկրետ անվանումներով ու տեղագրությամբ, ինչը նորություն է մինչ այդ Ամարասի հիշատակություններն ամփոփող պատումների շարքում. սա մի կողմից բացատրվում է տեղանքին հեղինակի քաջաձանթ լինելու, մյուս կողմից՝ ժանրի զարգացման, տեքստի՝ դարից դար փոխանցելի ունեւորման կամ վերարտադրման հանգամանքներով:

«Հիմնուած է այն երկրալեզուի վերայ, որ Մուղան դաշտից կամ գաւառից մտած է Խազազի եւ Լուսաւորչի սարերի մէջ եւ կազմած դուրալի հովիտ, որի միջից հոսում է **Ամարաս** վտակն»³⁶, – աշխարհագրական վայրի նկարագրությանը հաջորդում է վանքի ճարտարապետական նկարագիրը. «Վանքս ի հիմանէ նորոգ կառուցեալ է 1858-ին չորս հաստատուն սիւների վերայ ամբողջապէս սրբատաշ կաթնագոյն քարով: Ունի մի աւագ եւ երկու փոքր խորաններ, տասն մեծ-մեծ լուսամուտ, մի դուռն արեւմտեան կողմից, երկու խորհրդարան, մի աւագան եւ մի փոքր կաթուղիկէ: Աւագ խորանի տակ է շատ վաղուց շինուած Հնութիւնն, որի մուտքն բացուած է դասի հարաւային կողմի բեմի մօտից. տասնետուօ սանդուղներով իջնում է մինչեւ յատակի մատուռն: Ստորերկրեայ շինութեանս երկարութիւնն (ներսից չափելով) 3 մետր 70 սանթիմ, լայնութիւնն 1 մետր 90 սանթիմ: Փոքրիկ մատուռս, որ ամբողջապէս շինուած է Խազազի հանքի սրբատաշ քարով, սացի հարաւային մուտքիցս ունեցած է եւ միւս մուտք արեւելեան կողմից, որ փակ է այժմ՝ Հիւսիսային դասում առաջին լուսամտին պատկից շինուած է մի գեղեցիկ տապանաքար, որի տակ է ամփոփուած Սուրբ Լուսաւորչի

³⁴ **Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց**, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Եր., «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1999, 415 էջ: Այս հարցի շուրջ տե՛ս նաև **Բալայան Չ.**, Արցախը XIX դարի հայ գրականության մեջ, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., 2021, 832 էջ:

³⁵ Նույն տեղում, էջ 218:

³⁶ Նույն տեղում:

Թողին՝ Աղուանից Ա. կաթուղիկոս Գրիգորիսի մարմինն: Ահա այս է գլխավոր ուխտատեղին»³⁷:

Տեքստի շարունակությունում Մակար Բարխուտարեանցը ևս, ինչպես Սարգիս Ջալալյանցը, ցավով է արձանագրում երբեմնի փառահեղ վանքի անմխիթար վիճակը: «Ընդհանրապես անմաքուր, անկարգ եւ անխնամ է այս պատուական վանքն ամենայն մասամբ, որ այժմ ընկած է բարոյապէս եւ նիւթապէս»³⁸,– արձանագրում է Մ. Բարխուտարեանցը: «**Ամարաս** աւերակ գիւղաքաղաք» խորագրի ներքո Մ. Բարխուտարեանցը փաստում է, որ երբեմնի բնակավայրը վերածվել է ավերակի:

Ամարասը Ղևոնդ Ալիշանի «Արցախ» աշխատությունում

Ղևոնդ Ալիշանի (1820–1901 թթ.) «Արցախ»³⁹ աշխատությունը եզակի և արժեքավոր փաստական նյութեր է պարունակում և յուրահատուկ ներդրում է հայագիտության բնագավառում: Այն նվիրված է Մեծ Հայքի նահանգ Արցախի պատմաաշխարհագրական նկարագրությանը, որտեղ մանրամասն քննված և ներկայացված է նաև Ամարասի վանքը՝ ներառելով մինչ այդ եղած պատմագիտական, ճամփորդական և այլ նյութերը:

Ալիշանի պատումն առանձնանում է իր ինքնատիպությամբ, իմաստային որոշակի շերտերի հավելումներով և, իհարկե, հեղինակի ինքնատիպ ոճի շնորհիվ: Ալիշանը, ընդլայնելով իր ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը, բացի պատմիչների երկերից ու ուղեգրություններից, ուշագրավ փաստեր է բերում նաև ճառընտիրներից, պարբերական մամուլից:

«Տփխիսից և Շուշիից ապրիլի 23-ին գրում են, որ Ամարասում են գտնվում Սուրբ Գրիգորիսի նշխարքները: Թեմի արքեպիսկոպոս Գևորգը, վարդապետ Գևորգ Արամյանին ուղարկում է նորոգելու եկեղեցին, որի բեմի առջև պեղելով՝ գտնում են օրորոցաձև կափարիչով վիմափոր գերեզման՝ Սուրբ Գրիգորիսի մարմինը, վրան գրված հայ և ասորի գրերով: Բայց երբ բացում են, տեսնում են, որ այնտեղ միայն հող կա: Հետո, փոսի հյուսիսային պատը պեղելով, գտնում են նրան

³⁷ Նույն տեղում, էջ 219:

³⁸ Նույն տեղում:

³⁹ **Ղևոնդ Ալիշան**, Արցախ, Եր., ԵՊՀ հրատ., 1993, 124 էջ:

նման մի այլ շիրիմ և նրանում նշխարքները: Շուշիից 2000 մարդկանց հետ միասին գալիս է արքեպիսկոպոսը, վերցնում է գլուխը և դնում գերեզմանի վրա, արձաթյա ավսեի մեջ որպես հարգանքի նշան: Այնուհետև տանում են Շուշի և երեքական օր դնում են քաղաքի բոլոր եկեղեցիներում որպես հարգանքի նշան, իսկ հավատացյալները պատվի համար խումբ-խումբ հաճախում են եկեղեցի: Արքեպիսկոպոսը դադարեցնում է եկեղեցու շինարարությունը, մինչև Էջմիածնի ժողովից պատվեր ստանալը: Թվում է, որ առաջին գերեզմանը դիտավորյալ կերպով դատարկ է թողնվել՝ գերեզման թալանողներին խաբելու համար. ինչպես որ ասում են, թե Լենկթեմուրը բացել է և ոչինչ չի տեսել»⁴⁰:

Ալիշանը հետաքրքիր մանրամասներ է բերում՝ կուռ և սեղմ, բայց փաստական առումով հարուստ և բովանդակալից ոճով ամփոփելով նաև եղած նյութը, նոր տվյալներով հավելելով մինչ այդ հայտնի աշխատություններում արձանագրված տեքստի տարածությունը՝ միջտեքստայնության կապը հասցնելով տարբեր դարաշրջաններից ավանդված տեքստերին:

Ամարասը ազգագրության էջերում. Երվանդ Լալայան. «Արցախ»

Հայ ազգագրագետ, բանահավաք, հնագետ Երվանդ Լալայանի (1864–1931) երկերի 2-րդ հատորն ընդգրկում է պատմական Արցախի տարածքի նյութերը⁴¹ քննելով դրանք համակողմանիորեն:

«Նշանավոր վանքեր» բաժնում Երվանդ Լալայանն անդրադառնում է Ամարաս վանքին⁴²: Հայտնի փաստ է, որ գրականությունը սնվում է բանահյուսությունից, ազգագրությունից, սակայն այս պարագայում վստահաբար կարող ենք պնդել նաև հակառակը, քանի որ Երվանդ Լալայանի բերած ազգագրական նյութի մեջ նկատելի են հայ մատենագիտությունում խնդրի վերաբերյալ ավանդված տեքստերի իմաստային շերտեր: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ Լալայանը նյութը քննել է բազմակողմանիորեն՝ ներառելով և՛ պատմագրութ-

⁴⁰ Այս վերջին մանրամասնությունների աղբյուրը Ալիշանը նշում է իր ձեռագիր օրինակում՝ «Մասիս, լրագիր, 5 հունիսի, 1856, թիվ 332»: **Ղևոնդ Ալիշան**, «Արցախ», Եր., Երևանի համալսարանի հրատ., 1993, էջ 103–104:

⁴¹ **Լալայան Ե.**, Երկեր 5 հատորով, հատոր 2-րդ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 505 էջ:

⁴² Նույն տեղում, էջ 34:

յունը, և՛ աշխարհագրությունը, և՛ գրավոր ու բանավոր ավանդագրույցները:

Ամարասի նկարագրությունը սկսելով աշխարհագրական տեղագրությունից՝ շարունակում է ճարտարապետական կառուցվածքի մասին մանրակրկիտ տեղեկություններով, անդրադառնում նաև պատմագրությունից ավանդված Ս. Գրիգորիսի նշխարներին: Երվանդ Լալայանի երկում ուշագրավ է հատկապես Ս. Գրիգորիսի նշխարների վրա կառուցված գերեզմանաքարի նկարագրությունը՝ տապանագրերով հանդերձ. «Վանքի մեջ, հյուսիսային դասի մոտ, պատին կից գտնվում է մի բավական գեղեցիկ գերեզմանաքար, որ ընկնում է մատուռի մեջ ամփոփված Ս. Գրիգորիսի նշխարների վրա: Գերեզմանաքարը մի պատվանդանի վրա դրված դազադած եւ միաձույլ քար է, որի եզրերը գեղեցիկ, շղթայակապ նախշերով եզրափակված են: Քարի երեսին քանդակված է կաթողիկոսական թագ, գավազան եւ խաչ, իսկ ներքեւում կա հետեւյալ տապանագիրը. «Տամբարան սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի թողին սրբին Գրիգորի Լուսավորչի Պարթևի»: Տապանաքարի երկու կողքին՝ «Ծնեալ յամի ՁԻԲ (322). օծեալ ՅԻՄ (340) եւ նահապտեալ ՅԻԸ (348) ի Սանեսան թագաւորէն Մասգդըթաց ի Դրբենդ. բերեալ **յԱմարաս** սուրբ նշխարս ի ձեռն ձեռնասուն սարկաւազաց նորին Արցախունի:

Արձանաքարս սրբոյն Գրիգորիսի աշխարութեամբ ճարտարապետ Միքայէլ Տեր Իսրայէլեանց Շուշեցոց ի յիշատակ կենդանեաց եւ նընջելոց իւրոց: 'ի 1889 ամի 1 նոյեմբերի»:

Գերեզմանաքարի կողքից մի փոքրիկ անցք է բացված, որտեղից աղոթողները հող են վերցնում եւ ուտում կամ խառնում ջրի հետ, խմում»⁴³:

Ե. Լալայանը նշում է նաև վանքի խորհրդարանում դրված արձաթե ձեռքի մեջ ամփոփված Ս. Գրիգորիսի մասունքի մասին, որի հանդեպ հավատի ու ակնածանքի զգացումից ժողովուրդը մատանիներ է անց կացրել մատները և սաթից պատրաստված ապարանջան դրել թևը: Շարունակելով Ամարասին վերաբերող տեղեկությունների բազմակողմանի քննությունը՝ Երվանդ Լալայանը հավելում է նաև վան-

⁴³ Նույն տեղում, էջ 34–35:

քապատկան ունեցվածքի մասին տեղեկություններ՝ որպես վանքի կալվածքներ նշելով վարելահողեր, այգետեղի, ջրաղաց և այլ եկամուտ:

Կարևորելով ազգագրության դերը՝ պետք է արձանագրել, որ ազգագրական հետազոտությունները արժեքավոր նյութեր են պարունակում և ներկայանում են որպես մշակութային հիշողության յուրատիպ շտեմարան: Այն օգնում է հասկանալ և գնահատել ազգային ինքնությունը ձևավորող եզակի մշակութային ժառանգությունը: Երվանդ Լալայանի՝ Ամարասիկ վերաբերող ոչ ստվարաձավալ տեքստը ներկայանում է մշակութային հիշողություն, ազգային-հավաքական ինտելեկտու բնավորություն, ինքնություն ձևավորող ու ամրապնդող գործառույթներով:

Ազգագրական էջերը ևս փաստում են, որ Ամարասի վանքը՝ որպես հոգևոր և կրթական կենտրոն, մեծ դեր է ունեցել հայ ժողովրդի հոգևոր, կրթական և մշակութային կյանքի զարգացման, ազգային ինքնության ձևավորման ու ամրապնդման հարցերում:

Ամարասը պատմագրության և գեղարվեստական իրացման սահմաններում. Րաֆֆի. «Խամսայի մելիքությունները»

Պատմագրության և գրականության սահմանները զատորոշելը որոշ երկերի դեպքում բարդ ու բազմաշերտ ուսումնասիրություն է պահանջում, երբեմն նույնիսկ հնարավոր չէ այդ սահմանները տարորոշելը, ժանրային հստակ բնութագիր տալը: Բնավ չփորձելով վիճարկել Րաֆֆու «Խամսայի մելիքությունները»⁴⁴ աշխատության ժանրային մեկնաբանումները՝ այնուամենայնիվ ակնհայտ փաստ է, որ վերոհիշյալ երկը, լինելով պատմական աշխատություն, նաև գեղարվեստական շերտեր է պարունակում, որն արտացոլում է հեղինակի աշխարհայացքային, գեղարվեստական, գեղագիտական, ըմբռնումների շեշտերն ու լեզվաոճական առանձնահատկությունները: Հետևաբար Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» երկում գործ ունենք ինչպես պատմական փաստերի, այնպես էլ որոշ դեպքերում դրանց գեղարվեստական իրացման երևույթների հետ: Ավելին, խոսելով տվյալ երկի մասին՝ Րաֆֆին ինքն է առաջինն այդ աշխատությունը համարել գրականութ-

⁴⁴ **Րաֆֆի**, «Խամսայի մելիքությունները», Թիֆլիս, Կովկասի կառավարչ. գլխ. կառավ. տպարան, 1882:

յուն՝ համարելով այն «ծառայություն գրականությանը»: Պատմության ավարտամասում նա գրում է. «...երջանիկ կը համարեմ ինձ, եթէ կը յաջողվի այդ ձեռնարկութեան մէջ մի փոքրիկ ծառայութիւն անել մեր գրականութեանը»⁴⁵: «Խամսայի մելիքությունները» երկում Րաֆֆին, Ամարասի վանքի վերաբերյալ բերելով պատմական փաստեր, դրանց հաղորդում է նաև գեղարվեստական շերտեր՝ երբեմն վիպելով, ստեղծելով պատմական կերպարների, բնավորությունների, փոխհարաբերությունների, հոգեբանության, ժամանակաշրջանը բնորոշող մտածողության գեղարվեստական պատկերներ: Ամարասի վանքի վերաբերյալ Րաֆֆու հիշատակումներից առանձնանշելի են մի քանի ուշագրավ դրվագներ:

Պատմելով Մելիք Շահնազար Բ-ի արարքների մասին՝ փաստում է, որ նրա գործունեությունը անդառնալի հարված էր մելիքությունների իշխանությանն ու գոյությանը. «1791 թ. վախճանվեցաւ Մելիք Շահնազար Բ-ն: Ղարաբաղը ազատվեցաւ իր կործանողից: Բայց խամսայի մելիքութիւններին հասցրած նրա հարուածը այն աստիճան մահացու էր, որ այլ ևս ոչինչով բժշկել չէր կարելի...»⁴⁶.

Ապա Րաֆֆին պատմում է, որ Մելիք Շահնազար Բ-ն, մահվան մահճում զղջում է իր արարքների համար և փորձում է բարի գործերով և հատկապես Աստծուն ծառայություն մատուցելով քավել իր մեղքերը: «Եւ որպէս այդ տեսակ մարդիկ միշտ կրօնական բարեպաշտութեան մէջ են որոնում իրանց մեղքերի թողութիւնը», Մելիք Շահնազար Բ-ն մտածում է ավելի նշանավոր այնպիսի գործ կատարել, որով կքավի և՛ իր մեղքերը, և՛ շահի ժողովրդի սերը: Եվ որպէս այդպիսի գործ՝ նա ձեռնամուխ է լինում Ամարասի վանքի շինարարությանը: Մելիք Շահնազար Բ-ի մասին իր պատմության մանրամասներում Րաֆֆին փաստում է. «**Ամարասայ** վանքը, որի մէջ ամփոփված էին Լուսաւորչի թոռի՝ սուրբ Գրիգորիսի նշխարները, խիստ անշուք և կիսաւեր դրութեան մէջ էր նրա ժամանակում: Նա սկսեց այդ վանքի շինութիւնները վերանորոգել. շրջապատեց վանքը ամուր և բարձր պարիսպներով, աշտարակներով, միաբանութեան համար խուցեր, սենեակներ շինեց, վանքային տնտեսութեան համար ընդարձակ սեղանատուն, ամբարանոց-

⁴⁵ Նույն տեղում, էջ 414:

⁴⁶ Նույն տեղում, էջ 160:

ներ և ախոռատուն հիմնեց, բոլորը սրբատաշ քարից, բոլորը մեծ և վա-
յելուչ: Բայց դեռ տաճարի կառուցմանը չը ձեռնարկած, մահը վրա հա-
սաւ, նրա բաղձանքը թողեց անկատար: Հանգուցեալի արկղների մէջ
գտան մի քանի քսակներ լիքը ոսկիներով, որ կտակել էր տաճարի շի-
նուացքը աւարտելու համար»⁴⁷: Շարունակության մէջ Րաֆֆին գրում է,
որ նրա մահից հետո, սակայն, ժառանգները չկատարեցին կտակը, այ-
սինքն՝ ավարտին չի հասցվում վանքի ամբողջական վերանորոգումը:

«Խամսայի մելիքությունները» երկում Ամարասի մասին մյուս
ուշագրավ փաստարկը կապված է նշանավոր հոգևորական Բաղդա-
սար մետրոպոլիտի (1775–1854)⁴⁸ գործունեության հետ: Րաֆֆին Բաղ-
դասար մետրոպոլիտի առաքինասեր և աստվածահաճո գործերից
մատնանշում է Ամարասի հոգևոր կյանքի վերականգնումը. «Բաղդա-
սար միտրապոլիտի աշխատութիւններից մէկն էլ այն եղաւ, որ թուրքե-
րի և ռուսների ձեռքից ազատեց Ամարասայ սուրբ Գրիգորիսի վանքը:
Այդ վանքը բաւական ժամանակ անտէր մնալով, թուրքերը գրաւել էին,
և տալով նրան իրանց հասկանալի մի անուն, Աղ-օղլան, համարում էին
իրանց սրբավայր: Վանքի շրջակայ հողերը և Ամարասայ ձորի ամբողջ
կալուածները թուրքերի տիրապետութեան ներքոյ էին: Իսկ վանքի ըն-
դարձակ սենեակները և ամբողջ շինութիւնը, բացի տաճարից, ռուսնե-
րը ծառայեցնում էին որպէս մաքսատուն: Միտրապոլիտի աշխատու-
թեամբ 1848 թին ռուսաց կառավարութեան հրամանով մաքսատունը
տեղափոխվեցաւ Երասխի ափի մօտ, Ջաբրայէլում, իսկ վանքը իր կա-
լուածներով դարձաւ սեպհականութիւն հայոց հոգևոր կառավարու-
թեան»⁴⁹:

Պատմական այս դրվագը փաստում է հայ ժողովրդի նվիրումն ու
հավատամքը ինքնության՝ որպէս գերակա արժեքի պահպանման, ամ-
րապնդման հանդեպ, որ դարեր ի վեր ուղեկցել է հայ ժողովրդին՝ դրա-
նով իսկ նպաստելով նաև մշակութային հիշողության ձևավորմանն ու
գոյությանը:

⁴⁷ Նույն տեղում, էջ 160–161:

⁴⁸ **Էջմիածին**, Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, «Բաղդասար մետրոպոլիտ», հեղ.՝ Ա. Տեր-Դանիելյան, 1949, համար 1–2, էջ 49–54:

⁴⁹ **Րաֆֆի**, «Խամսայի մելիքութիւնները», Թիֆլիս, 1882, էջ 308:

Եզրակացություններ

Ուսումնասիրելով Ամարասի վանքին վերաբերող տեքստերը 4–19-րդ դարերի հայ պատմագրության, ուղեգրության, ազգագրության և գեղարվեստական գրականության էջերում՝ փաստեցինք, որ Ամարասի վանքը պահպանվել է ոչ միայն պատմագրական աղբյուրներում, այլ նաև ուղեգրական, ազգագրական, գեղարվեստական գրականության էջերում: Պատմական իրադարձությունները և վանքի մշակութային նշանակությունը ներթափանցել են հայ ազգային ինքնության ձևավորման և մշակութային հիշողության պահպանման գործընթացներում:

Ամարասի վանքը, որը Հայաստանի հնագույն վանական համալիրներից է, ունի հարուստ մշակութային և պատմական հիշողություն: Այն առանցքային դեր է ունեցել առհասարակ քրիստոնեության պատմության մեջ: Ամարասը, լինելով առաջին քրիստոնեական վանքերից մեկը, հայ ժողովրդի համար առանձնանում է որպես պատմական հիշողությունը և ազգային ինքնագիտակցությունը միավորող խորհրդանիշ, մշակութային ժառանգություն, որի ճակատագիրը ցավալիորեն վտանգված է՝ 2023 թ. ադրբեջանական օկուպացիայի հետևանքով:

ЗАРИНЕ САРАДЖЯН

*Кандидат филологических наук, доцент,
НАН РА, Институт литературы имени М. Абегамяна, отдел новой
армянской литературы*

АМАРАС И КУЛЬТУРНАЯ ПАМЯТЬ: ОТ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ ДО ЛИТЕРАТУРЫ XIX ВЕКА

Резюме

Основная цель статьи – изучить роль монастыря Амарас в армянской культурной памяти, от историографии до армянской литературы XIX века, выяснить, как монастырь Амарас превратился в историко-культурный символ и как это отразилось в трудах армянских историков и писателей.

Одной из выдвинутых задач является изучение историографических, путевых, этнографических и других упоминаний о монастыре Амарас, ссылки на монастырь Амарас и его историю в армянской литературе IV–XIX веков; раскрыть, каким образом монастырь воспринимался как святое место и национальная ценность в разные периоды истории.

В ходе исследования использовались историко-сравнительный, текстологический, герменевтический и другие методы.

Новизна статьи заключается в том, что роль монастыря Амарас рассматривается не только как религиозно-исторического центра, но и носителя культурной памяти с точки зрения армянской историографии, этнографии и литературы IV–XIX вв. Это новый подход, поскольку исследование выходит за рамки историографии и литературы, представляя, как монастырь Амарас сохранился не только в исторических источниках, но и на страницах справочной, этнографической и художественной литературы. Статья проливает новый свет на то, как исторические события и культурное значение монастыря проникли в процессы формирования армянской национальной идентичности и сохранения культурной памяти.

Монастырь Амарас, один из старейших монастырских комплексов Армении, имеет богатую культурную и историческую память. Он сыграл ключевую роль в истории христианства в целом. Амарас, являясь одним из первых христианских монастырей, выделяется для армянского народа как символ, объединяющий историческую память и национальное самосознание, культурное наследие, судьба которого находится под серьезной угрозой в результате азербайджанской оккупации 2023 года.

Ключевые слова: Амарас, историография, христианство, культурная память, исторический факт, национальная идентичность, литература.

ZARINE SARAJYAN

*PhD, Associate Professor, NAS RA, Institute of Literature after M.
Abeghyan, Department of New Armenian Literature*

AMARAS AND CULTURAL MEMORY: FROM ARMENIAN HISTORIOGRAPHY TO 19TH CENTURY LITERATURE

Abstract

The main purpose of the article is to study the role of Amaras Monastery in Armenian cultural memory, from historiography to Armenian literature of the 19th century, to find out how Amaras Monastery turned into a historical and cultural symbol and how this was reflected in the works of Armenian historians and writers.

One of the tasks put forward is to study historiographic, travel, ethnographic and other references to Amaras Monastery, references to Amaras Monastery and its history in Armenian literature of the 4th–19th centuries; to reveal how the monastery was perceived as a holy place and national value in different periods of history.

Historical-comparative, textual, hermeneutic and other methods were used in the study.

The novelty of the article lies in the fact that Amaras Monastery is considered not only as a religious and historical center, but also as a bearer of cultural memory from the point of view of Armenian historiography, ethnography and literature of the 4th–19th centuries. This is a new approach, as the study goes beyond historiography and literature, presenting how Amaras Monastery has been preserved not only in historical sources, but also in reference, ethnographic and fiction literature. The article sheds new light on how the historical events and cultural significance of the monastery have permeated the processes of forming Armenian national identity and preserving cultural memory.

Amaras Monastery, one of the oldest monastic complexes in Armenia, has a rich cultural and historical memory. It played a key role in the history of Christianity in general. Amaras, being one of the first Christian monasteries, stands out for the Armenian people as a symbol that unites historical memory and national identity, a cultural heritage whose fate is under serious threat as a result of the Azerbaijani occupation of 2023.

Keywords: *Amaras, historiography, Christianity, cultural memory, historical fact, national identity, literature.*